Հրանտ Մաթևոսյան

Կապույտ աստղերով սպիտակ ձին

Կապույտ աստղերով սպիտակ ձիու, և առհասարակ Իգնատի տնտեսության պատմությունն սկավում է 1953 թ. օգոստոսյան պլենումով. թույլատրվեց պահել երկու կով, մի քանի խոզ, մի երկու ոչխար: Նաև ձի: Թույլատրվեց՝ նշանակում է ձեռք բերվեց երկու կով և սպասում՝ չե՞ն թույլատրի երեքը, նաև չորսը, հին երկու ոչխարը գառներ տվեցին, գառները ոչխարներ դարձան, և ոչխարների թիվը ձգտեց հասնել տասի: Թույլատրվեց՝ նշանակում է դռանը ոռոռաց մի բոլուկ խոզ: Ձի նույնպես ունեցավ: Կարգին տնտեսություն: Ձին որ՝ հիանալի ապրանք էր: Եվ առհասարակ ձին հիանալի ապրանք է, թեկուզ ամենաքոսոտը լինի:

Հետո շրջկենտրոնում հարմար գտան, որ Աթան և Ահնիձոր գյուղերը միացվեն Ստեփան Շահումյանի անվան մեկ սովխոզի մեջ: Գյուղում իմացան այդ մասին:

Սովխո՞զն է լավ թե կոլխոզը: Չէ, գիտենք, որ երկուսն էլ լավ են, բայց դրանցից ո՞րն է լավ: Այնտեղ, Արարատյան դաշտում, մի սովխոզ կա, շատ լավ են ապրում: Ապա հայտնաբերեցին, որ այնտեղ, Արարատյան դաշտում, լավ ապրող մի կոլխոզ էլ կա: Դե այնտեղ, Արարատյան դաշտում, բոլորն էլ լավ են ապրում, ամեն տուն սեփական մեքենա ունի: Հը՞, սովխո՞զն է լավ, թե կոլխոզը:

Մի երկու տարի հարցուփորձ էին անում, դատում, վճռում, վճռածը դեն նետում, նորից դատում և՝

Սովխո՞զն է լավ, թե կոլխոզը:

Շրջկենտրոնից եկան հասարակական ժողովի՝ սովխոզացման օրակարգով: «Չգիտենք, մեկ է, ուզում է սովխոզ լինի, ուզում է կոլխոզ: Ինչ ուզում եք արեք, մեկ է, մեկ, մեզ համար մեկ է»:

Մե՞կ է: Ո՞վ է համաձայն: Համաձա՛յն: Չկա՞: Դե՞մ: Չկա՛: Ձեռնպա՞հ: Բոլո՞րդ եք ձեռնպահ:

Չէ, դե ձեռնպահ չենք, ուղղակի... հա-հա-հա...

Ստեղծվեց սովխոզ: Թույլատրվում է երեք ոչխար, մի կով: Մնացածը՝ դալոյ... Հա՞վն էլ: Հա՞վը. մի՛ կատակեք: Իսկ ձի՞ն: Ձին լուրջ էր: Թողեցին դիրեկտորի հայեցողությանը: Իսկ դիրեկտորը հայեցողություն չուներ, գցեց սովխոզների վարչության վրա: Այնտեղ մի՛շտ և անպայման ունեն հայեցողություն. Կտրե՛լ:

«Կտրել» մի տեսակ՝ կտրել ամեն օր հինգ-վեց կիլոմետր ճամփա՝ աշխատանքի և իրիկունները ոտքերը քարշ տալ նույն հինգ-վեց կիլոմետրը: «Կտրել» շատ է անլուրջ: Լո՛ւրջ ձի՞ն: Ձի՞ն... ախ, գրողը տանի ձիուն. մասնավորն ընդհանրապես կապիտալիզմ է ծնում... ձի՞ն... չգիտե՛նք: Թողեցին դիրեկցիային: Սա թույլատրեց, պայմանով՝ պետք է արոտավճար տալ ամիսը հարյուր ռուբլի: Ամեն տուն մի ձի ուներ, ծախեց, մթերեց: Էժա՛ն, դեն ածին:

Իգնատը կապույտ աստղիկներով սպիտակ զամբիկը տարավ Քարինջ: Այո՛, հենց նույն Քարինջը, որ գիտեք Սարյանի նկարից՝ «Քարինջը Թումանյանի լեռներում»: Տվեց երկու ոչխարի: Ձիուն շոյելով գնաց, ոչխարներին հայհոյելով եկավ: Մտահոգ գնաց, լաց լինելով եկավ՝ բոլորովին չմտածելով, որ լացում է ոչ տիպական, ուշացած լացով:

Մի գիշեր, այդ ամիսուկես անց էր, կապույտ աստղիկներով զամբիկը դուրսը զգույշ խրխնջաց, կամաց դոփեց գետինը՝ իմաց տալով, որ ինքը եկել է: Իգնատը դուրս եկավ: Փաթաթվեց պարանոցին: Խա՛ղու ջան... Քարաղ դրեց առաջը, զըն-նեց մեջքը: Տրորվածք կար: Խա՛ղու ջան... էն էշը ձի պահելն ինչ գիտի... էլ չես գնա, Խա՛ղու ջան... Ու սպիտակեղենով, մրսելով, մոլորված կանգնեց ձիու կողքին:

Ձին ծնելու էր, ցավի վրա էր փախել: Ցերեկը բարձրացավ սարերը, որտեղ մանր խրխինջով տրտինգ էր տվել որպես քուռակ, որտեղ բեղմնավորվել էր: Մի օր անց՝ ծնեց մի սիրուն քուռակ, ճակատն սպիտակ, ոտքերից մեկն սպիտակ, խուլուշխուլուշ ականջներով և զվարթ խրխինջով, ասես... արծաթե մանրադրամ էր թափում:

Իգնատը գյուղամիջից հեռախոսով քարնջեցուն հայտնեց, որ ձին սարերում է, էլ չի տա, թող գա ոչխարները տանի: Քարնջեցին պատասխանեց բավական հին և բավական գռեհիկ խոսքով.

Կնիկս կտամ, ձին չեմ տա:

Եվ խոսքի տերն էր: Եկավ տարավ: Ինչքան խնդրեց, չզիջց:

Խաթրդ շատ է, բայց ձին չեմ տա:

Ձին չէր գնում, ետ-ետ էր նայում, խրխնջում: Իգնատը նորից լցվեց:

Հետո Իգնատը ոչխարներից մեկը տվեց մի էշ առավ, սովորական մի էշ, երկար ականջներով ու երկար զռռոցով, որ դմբդմբում է կանոնավոր հաճախականությամբ: Բայց տեսեք, թե ինչ ավանակային վիճակի մեջ էր ընկել խեղճ էշը. երկար ականջների համար՝ ծեծ, զռռոցների ժամանակ բերանը փակելու փորձ և ծեծ՝ զռռոցի համար առանձին, ձախողման համար առանձին: Քարի գլխին ծեծ անզգույշ գնալու համար, ծեծից ձորը գլորվել ձորում ծեծ՝ գլորվելու համար, ծեծ նրա համար, որ գլորվելուց կաղին է տալիս:

Եվ ծեծ, երբ տերը հիշում էր, որ կապույտ աստղիկներով սպիտակ ձին ետ նայելով, դեպի սարերը խրխնջալով գնաց:

Հետո հաշտվեց.

Վատ էշ չի, սարից խոտը բարձեմ, մի անգամ թոշ ասեմ, մեկ էլ դռանը կկանգնի... Լավ էշ է... էշը լավ ապրանք է...